Արձանագրություն N 3
ՄՍԾ ԷԱՃԾՁԲ-22/7 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի
գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

20 դեկտեմբերի 2021թ
ժամը 11:10

Մասնակցում էին հանձնաժողովի՝
Նախագահ՝ Մարատ Սևոյանը
անդամներ՝ Հովհաննես Օհանյանը, Սպարտակ Մաթևոսյանը
քարտուղար՝ Գ. Ջանջուղազյան

I. Հայտերի գնահատման արդյունքների մասին

(Մարատ Սևոյան)

1. Ընդունել ի գիտություն, որ.

Սահմանված ժամկետում «Հովակիմյան Գրուպ» ՍՊԸ-ն էլեկտրոնային (eauction.armeps.am) աճուրդի համակարգի միջոցով հանձնաժողովին է ներկայացրել հայտով ներկայացրած փաստաթղթերի շտկված տարբերակը իսկ Գյումրու թիվ 1 արհեստագործական պետական ուսումնարան ՊՈԱԿ-ի կողմից շտկված փաստաթղթեր չեն ներկայացվել:

2. Գնահատող հանձնաժողովը ուսումնասիրեց «Հովակիմյան Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած շտկված փաստաթղթերը և արձանագրեց, որ ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

2.1 Հիմք ընդունելով վերոգրյալը գնահատող հանձնաժողովը որոշեց.

ա/ «Հովակիմյան Գրուպ» ՍՊԸ-ի, «Բիզնես Էլիտա» ՍՊԸ-ի «Աութսորս» ՍՊԸ-ի հայտերը գնահատել բավարար:

բ/ Գյումրու թիվ 1 արհեստագործական պետական ուսումնարան ՊՈԱԿ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել հայտը՝ հրավերով սահմանված պայմաններին չհամապատասխանելու հիմնավորմամբ:

գ/ 28-րդ չափաբաժինը հայտարարել չկայացած «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա, հետևյալ հիմնավորմամբ՝ հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

II. Ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների ամփոփման մասին

(Մարատ Սևոյան)

3. Ներկայացված գնային առաջարկների և հայտերի գնահատման արդյունքների հիման վրա հանձնաժողովը որոշեց.

ա/ «Հովակիմյան Գրուպ» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչել՝ 1-ին չափաբաժնի համար:

բ/ «Բիզնես Էլիտա» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչել՝ 2-րդ, 4-րդ, 8-14-րդ, 17-րդ, 21-րդ, 24-25-րդ, 27-րդ, 29-30-րդ չափաբաժինների համար:

գ/ «Աութսորս» ՍՊԸ -ին ընտրված մասնակից ճանաչել՝ 15-րդ, 19-20-րդ, 23-րդ չափաբաժինների համար:

Ընտրված մասնակիցներ են ճանաչվել բավարար գնահատված և էլեկտրոնային աճուրդի արդյունքում նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

III. Հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին

(Մարատ Սևոյան)

4. Հանձնաժողովը որոշեց ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել և նրանց հետ կնքել պայմանագիր «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածով և հրավերով սահմանված անգործության ժամկետի ավարտից հետո:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

Հանձնաժողովի

նախագահ _____ Մարատ Սևոյան

անդամներ՝ _____ Հովհաննես Օհանյան

_____ Սպարտակ Մաթևոսյան

քարտուղար՝ _____ Գ. Ջանջուղազյան